## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
## ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, 060 88 77 77 araks.armavir@mta.gov.am


# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 ՀՈՒՆԻՍԻ 2025թվականի N 51-Ա

## ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով և 62--րդ հոդվածով.

## ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2025 թվականի առաջին նստաշրջանի հինգերորդ հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲԱՍՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԲԱՐՅԱՆ ՄԵԼԱՆՅԱ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՂԱԶԱՐՅԱՆ ՂԱԶԱՐ

ՄԱԿԱՐՅԱՆ ՄԱՐՅԱՄ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԱՐԵԿ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՇԱՀԻՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

*Որոշման նախագիծը նախապատրաստեց*
ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արաքս համայնքի ավագանու
2025 թվականի հունիսի 25–ի N 51-Ա որոշման

# ՕՐԱԿԱՐԳ

## ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

1. ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԻՆԳՐՈՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Զեկ.՝ Ղ. Ղազարյան:

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2026-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼԵՒ ՄԱՍԻՆ:

Զեկ.՝ Ղ. Ղազարյան:

3.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 21-Ի N 157-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Զեկ.՝ Ղ. Ղազարյան:

4.ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ «ԳԱՅԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-ԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

5.ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ «ՄԵԾԱՄՈՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-ԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Զեկ.՝ Ղ. Ղազարյան:

6.ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ «ԱՐԱՔՍԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-ԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ :

Զեկ.՝ Ղ. Ղազարյան:

7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻՆ ԵՎ ՑԱՄԱՔԱՅԻՆ ԾԱԾԿՈՒՅԹԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ:

8. ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Զեկ.՝ Ղ. Ղազարյան:

9.ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Զեկ.՝ Ղ. Ղազարյան:

10.ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Զեկ.՝ Ղ. Ղազարյան:

11. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Զեկ.՝ Ղ. Ղազարյան:

12.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 11-Ի N 09-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Զեկ.՝ Ղ. Ղազարյան:

13.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 25-Ի N47-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Զեկ.՝ Ղ. Ղազարյան:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
## ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, 060 88 77 77 araks.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 ՀՈՒՆԻՍԻ 2025թվականի N 52-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2026-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 27.1 -ին հոդվածով՝

## ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը՝
1) Եկամուտների և ծախսային քաղաքականությունը շարադրող մասեր՝ համաձայն N 1 հավելվածի.
2) Վարչական և ֆոնդային մասերի եկամուտներն՝ ըստ ձևավորման աղբյուրների՝ համաձայն N 2 հավելվածի.
3) Հավելուրդը կամ դեֆիցիտը (պակասուրդը)՝ համաձայն N 3 հավելվածի.
4) Վարչական և ֆոնդային մասերի տարեկան հատկացումները ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի, դասերի և տնտեսագիտական դասակարգման հոդվածների՝ համաձայն N4 հավելվածի.
2. Ընդունել ի գիտություն, որ համայնքի կարճաժամկետ խնդիրները դիտարկվում են արդեն միջնաժամկետ /ՄԺԾԾ երեք տարվա կտրվածքով/ կանխատեսումների համատեքստում, եկամուտները կանխատեսվում են համայնքային բյուջեի ամրագրված եկամուտներին առնչվող հարաբերությունները կարգավորող ՀՀ օրենսդրությամբ, ծախսերը հստակ արտացոլվում են համայնքի զարգացման առաջնահերթություններն ու գերակայություններն ըստ գործառնական ոլորտների:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐԱՍՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԲԱՐՅԱՆ ՄԵԼԱՆՅԱ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՂԱԶԱՐՅԱՆ ՂԱԶԱՐ

ՄԱԿԱՐՅԱՆ ՄԱՐՅԱՄ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԱՐԵԿ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՇԱՀԻՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

*Որոշման նախագիծը նախապատրաստեց՝*
ԱՐՓԻՆԵ ԱՄԻՐՋԱՆՅԱՆ

Հավելված 1

ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու

2025 թվականի հունիսի 25 -ի

N 52 -Ա որոշման

ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի եկամուտները և ծախսային քաղաքականությունը շարադրող մասեր

Բովանդակություն


Ներածություն----------------------------------------------------------------------------------2

Գլուխ 1. Զարգացման հիմնական ուղղությունները և սկզբունքները-----------3

Գլուխ 2. Եկամուտներ---------------------------------------------------------------------5

2.1. Արաքս համայնքի 2026-2028թվականների կանխատեսվող եկամուտները-5

2.2.Եկամուտների վերծանումը ըստ առանձին տեսակների-----------------------5

Գլուխ 3. Ծախսեր ---------------------------------------------------------------------------------6

3.1. Արաքս համայնքի 2026-2028թվականների կանխատեսվող ծախսերը------6

3.2. Բյուջետային ծախսերի կանխատեսումը ըստ ոլորտների--------------------7

Գլուխ 4. Արաքս համայնքի 2026-2028թվականների կանխատեսվող դեֆիցիտը-8

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2026-2028թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը (այսուհետ՝ ՄԺԾԾ) հանդիսանում է Արաքս համայնքի զարգացման հեռանկարի թվային արտացոլումը և համայնքի միջնաժամկետ կտրվածքով գլխավոր ֆինանսական փաստաթուղթը, որը և հանդիսանում ելակետ՝ նախագծելու համապատասխան տարվան հաջորդող տարեկան բյուջեն:

ՄԺԾԾ-ն լինելով համայնքի եկամուտների ձևավորման ու ծախսերի կատարման ֆինանսական ծրագիր, ուղղված է ՏԻՄ-երին օրենքով վերապահված լիազորությունների շրջանակներում համայնքային ծրագրերի իրականացմանը:

Եթե ամենապարզ ձևով ներկայացնենք, ՄԺԾԾ-ն հաջորդող 3 տարիների ակնկալվող եկամուտների և առաջարկվող ծրագրերի ու միջոցառումների համապարփակ թվարկումն է ՏԻՄ-երի գործունեության յուրաքանչյուր բնագավառում: Լավագույն դեպքում, ՄԺԾԾ-ն պոտենցիալ սպառողների միջև սահմանափակ միջոցների համապարփակ և հետևողական բաշխումն է: Որպես այդպիսին՝ՄԺԾԾ-ն ՏԻՄ-երի գործունեության ֆինանսական կառավարման առանցքն է,որը բերելու է համայնքի կայուն և համաչափ զարգացմանը, ինչպես նաև կընձեռնեն համայնքին առավել արդյունավետ գեներացնել եկամուտները, մասնավորապես միջնաժամկետ կտրվածքով կմշակվեն մեխանիզմներ դրանք ավելացնելու ուղղությամբ, որը իր հերթին կբերի համայնքի զարգացմանը միտված ծախսերի ավելացմանը:

ՄԺԾԾ-ն կնպաստի ավելի լայն և հեռանկարային ծախսերի քաղաքականության մշակմանը, որի շնորհիվ համայնքի զարգացման հեռանկարը կստանա բյուջետային ձևաչափ և որը ըստ էության հասանելի կդարձնի բոլորին՝ այդ թվում քաղաքացիներին, ուսումնասիրելու միջնաժամկետ կտրվածքով համայնքի կողմից նախատեսվող ծախսերի բաշխումը ըստ ոլորտների՝ թվային տեսքով, ընդ որում սույն ֆինանսական փաստաթղթով առավել կընդգծվի բյուջետային ծրագրերի շարունակականության ապահովման ֆինանսական մեխանիզմները:Սույն փաստաթղթի նպատակն է՝ ներկայացնել համայնքի բնակիչներին, թե ՏԻՄ-երն ինչպե՞ս են արձագանքում համայնքի բնակիչների բարեկեցության բարձրացմանը՝ տարաբնույթ ծառայությունների մատուցման և ներդրումային ծրագրերի իրականացման միջոցով:

## ԳԼՈՒԽ 1 .ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

1. ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2026-2028 թվականների համար նախատեսված ծրագրերի իրականացումը հիմնված է համաչափ և կայուն զարգացման սկզբունքի վրա, որի նպատակային իրագործման համար առաջնահերթ են համարվելու և համայնքի զարգացման հիմնական ուղղություններն են՝

- Բարելավել համայնքի ֆինանսական վիճակը՝ ճշտելով հողի հարկի և գույքահարկի բազաները և բարձրացնելով սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը:
- Բարձրացնել բնակչությանը մատուցվող համայնքային ծառայությունների մակարդակը և որակը:

- Բարձրացնել ՏԻ-ը բնակիչների ներգրավվածությունը՝ բնակիչների մասնակցության ձևերի ներդրման և զարգացման միջոցով,

- Բարձրացնել ՏԻՄ-երի գործունեության թափանցիկության, հրապարակայնության և հաշվետվողականության մակարդակը,

- Ապահովել համայնքի ջրային ռեսուրսների նպատակային և արդյունավետ կառավարումն ու օգտագործումը

- Իրականացնել կրթության, մշակույթի և սպորտի բնագավառների համայնքային ենթակառուցվածքների պահպանման, շահագործման, նորոգման, ջեռուցման համակարգերի վերականգնման, գույքային վերազինման և այլ աշխատանքներ:

- Կապիտալ ներդրումներ կատարել համայնքի բնակարանային-կոմունալ տնտեսության, բարեկարգման և ճանապարհային տնտեսության բնագավառներում:

- Աշխուժացնել համայնքի մշակութային, մարզական և հասարակական կյանքը:

- Իրականացնել սոցիալական տարաբնույթ ծրագրեր:

- Նախադպրոցական հաստատությունների և դպրոցների մատչելիության և ներառականության հնարավորությունների ապահովումը

- Նախադպրոցական և արտադպրոցական կազմակերպությունների հիմնանորոգումը:

- Նախակրթական, կրթական, մշակութային և սպորտային օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների շարունակականության ապահովումը:

- Մշակույթի ոլորտի ենթակառուցվածքների զարգացում, մշակութային ծառայություններից օգտվելու ներառականության ապահովումը:

- Փողոցային լուսավորության համակարգի արդիականացումը, էներգախնայող համակարգերի ներդրումը, համակարգի անվտանգության և հուսալիության աստիճանի բարձրացումը:

- Երեխաների իրավունքների պաշտպանությունն ու անչափահասների հետ տարվող աշխատանքների բարելավումը:

- Բնակիչների սոցիալական պաշտպանվածության ապահովումն ու այդ նպատակով հաշմանդամություն ունեցող անձանց, ծնողազուրկ երեխաների, բազմազավակ և անապահով ընտանիքների կենսական ապահովմանն ուղղված սոցիալական ծրագրերի արդյունավետ իրականացումը:

- Թափոնների կառավարման ժամանակակից համակարգի ստեղծման, այդ թվում՝ աղբահանության կազմակերպման և կարգավորման, նոր աղբավայրի ստեղծման ապահովումը:

Համայնքի զարգացման հիմնական ուղղությունները ուղղված են բնակչության կենսական շահերի ապահովմանը, շրջակա միջավայրի պահպանմանը, համայնքի հարմարավետ ու բարեկեցիկ միջավայրի ստեղծմանը, համայնքային ենթակառուցվածքների արդիականացմանն ու զարգացմանը:

## ԳԼՈՒԽ 2. ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

### 2.1. ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2026-2028ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

1. Արաքս համայնքի 2026-2028 թվականների եկամուտները կանխատեսվել են համապատասխանաբար՝ 2693424,6 , 2664458,6 և 2677686,3հազար դրամ:

Հատկանշանական է, որ ընդամենը եկամուտների կազմում աճ է նախատեսվում գրեթե բոլոր բյուջետային բաժիններում և խմբերում, մասնավորապես հարկ է նկատել Արաքս համայնքի սեփական եկամուտների դինամիկան, որը հիմնականում պայմանավորված է ՀՀ Հարկային օրենսգրքի 233-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված դրույթների կիրառմամբ, որի արդյունքում միջնաժամկետ կտրվածքով սեփական եկամուտների կազմում հիմնական աճը նախատեսվում է հարկ անշարժ գույքի մասով եկամտատեսակից:

### 2.2. ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՎԵՐԾԱՆՈՒՄԸ ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ

1. ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2026-2028 թվականների եկամուտների կազմում՝ սեփական եկամուտների ցուցանիշը համապատասխանաբար կազմում է 493539,7, 516573,7 և 522801,4 հազար դրամ, և սույն դինամիկան դիտարկելիս հարկ է արձանագրել, որ աճը կանխատեսվում է 5 տարվա կտրվածքով, հաշվի առնելով նաև 2024 թվականը՝ 395694,4 հազար դրամ և 2025 թվականը՝ 438539,7հազար դրամ:

2. 2026-2028թթ. ՄԺԾԾ-ով սեփական եկամուտների կազմում էապես աճող եկամտատեսակներն են՝

1) Գույքահարկ անշարժ գույքի մասով համապատասխանաբար՝ 106231,9, 115000,0 և 120000,0 հազար դրամ,

2) Գույքահարկ փոխադրամիջոցների մասով՝ 172032,5, 175000,0 և 180000,0 հազար դրամ,

3) Այլ եկամուտներ՝ 83971,4, 87471,4 և 91954.7 հազար դրամ,

4) Տեղական տուրքեր՝ 9383,6, 9393,6 և 9493,6 հազար դրամ,

5)Տեղական վճարներ՝86200.0, 87200.0 և 87200.0 հազար դրամ,

3. Պետության կողմից տրամադրվող հատկացվող շնորհները՝ այդ թվում ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիան, նախնական կանխատեսմամբ նախատեսվում է մնալ անփոփոխ, սուբվենցիաները կանխատեսվում է համապատասխանաբար՝ 1134884,9, 1134884,9 և 1134884,9 հազար դրամ:

## ԳԼՈՒԽ 3. ԾԱԽՍԵՐ

### 3.1. ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2026-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԾԱԽՍԵՐԸ

1. Արաքս համայնքի 2026-2028 թվականների ծախսերը կանխատեսվում են համապատասխանաբար՝ 3526424.6, 3548598.6 և 3653683.9 հազար դրամ և միտված են համայնքի համաչափ և կայուն զարգացմանը: Ծախսերի քաղաքականության և նպատակներին հասնելու սկզբնաղբյուրն է հանդիսանում Արաքսի համայնքապետարանի պահպանման ծախսերի համատեքստում ստանալ այնպիսի մարդկային ռեսուրս, որը ի վիճակի կլինի համապատասխան ծառայությունները մատուցել և լուծելով համայնքի առջև դրված կայուն զարգացման պահանջը՝ մշակելով և կատարելով դրա իրագործմանն ուղղված բյուջետային ծրագրերը: Ծախսային մասը նախագծվել է հետևելով բյուջետային հաշվեկշռվածության սկզբունքին՝ ապահովելով բյուջեների կառուցման ստանդարտները:

### 3.2 Բյուջետային ծախսերի կանխատեսումը ըստ ոլորտների

1. Կանխատեսվող բյուջետային ծախսերի բաշխման ոլորտային սկզբունքը կայանում է Արաքս համայնքի համաչափ զարգացման և ոլորտային ուսումնասիրությունների արդյունքում հանգած խնդիրների լուծման տեսլականներով, և այն առավել մատչելի ձևով ներկայացված է բյուջետային դասակարգման գործառական խմբերում, մասնավորապես դրանք ըստ բաժինների բաշխված են հետևյալ կերպ.

1) Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ համապատասխանաբար՝560000,0, 577500,0 և 571500.0 հազար դրամ,

2) Տնտեսական հարաբերություններ՝ 1170000.0, 982966,5 և 1097000.0հազար դրամ,

3) Շրջակա միջավայրի պաշտպանություն՝ 110000,0, 110000,0 և 110000,0 հազար դրամ,

4) Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն՝ 692914,5, 705140.0 և 615000.0 հազար դրամ,

5) Հանգիստ, մշակույթ և կրոն՝ 213100.0, 364700.0 և441500.0 հազար դրամ,

6) Կրթություն՝ 428728.1, 468000.0 և 470000,0հազար դրամ,

7) Սոցիալական պաշտպանություն՝ 15000,0, 10000,0 և 10000,0 հազար դրամ,

8) Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր՝ 325685.0, 330292.0 և 331534.0հազար դրամ,

2. Արաքս համայնքի 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսերի խոշոր, նշանակալից և շարունակական ծախսային ծրագրերից են՝

1. **Ջրահեռացման և ջրամատակարարման համակարգերի կառուցման , պահպանման համար նախատեսվել է՝ համապատասխանաբար՝** 400000.0, 420140.0,0 **և** 305000,0 **հազար դրամ**/:

Ծրագրով նախատեսվում է իրականացնել Արաքս համայնքի բնակավայրերում սեփականության իրավունքով համայնքին պատկանող տարածքներում նոր ջրահեռացման և ջրամատակարարման համակարգի կառուցում, մասնավորապես Արաքս գյուղի **Գ.Նժդեհ, Խոստիկյան, Բարեկամություն փողոցների ջրահեռացման և Բարեկամության փողոցի ջրամատակարարման համակարգի կառուցում, Արաքս համայնքի Գայ գյուղի Գարնանային, Գարնանային 2, Գարնանային 3, Սարյան 3, Սարյան 4, 20-րդ, Երևանյան 6 փողոցների ջրահեռացման համակարգի** կառուցում:
Ծրագրով նախատեսվում է Արաքս գյուղի **Գ.Նժդեհ, Խոստիկյան, Բարեկամություն փողոցների ջրահեռացման և Բարեկամության փողոցի ջրամատակարարման** նոր համակարգի կառուցում՝ 2000 գծմ.: Ջրամատակարումը կապահովի բնակիչների կենսական նշանակության խնդիրները, իսկ ջրահեռացման համակարգի կառուցման արդյունքում կունենանք անձրևաջրերի հավաքագրման և ջրահեռացման համակարգ:

Ծրագրով նախատեսվում է իրականացնել Արաքս համայնքի բնակավայրերում սեփականության իրավունքով համայնքին պատկանող տարածքում շինարարական աշխատանքներ, մասնավորապես Խորոնք, Առատաշեն, Գրիբոյեդով, Ջրառատ, Ջրարբի, Լուսագյուղ, Ակնաշեն, Մեծամոր գյուղերի ջրահեռացում և Հայկաշեն գյուղի ջրահեռացում և ջրամատակարարում:
Ծրագրով նախատեսվում է Խորոնք գյուղի Վ.Վարդանյան փողոցի 1200 գծմ ջրահեռացման համակարգի կառուցում: Ջրահեռացման համակարգի շնորհիվ կլուծվի հողի խոնավության հաշվեկշռի խնդիրը, կստեղծվի բարենպաստ պայմաններ շենքերի, բույսերի և գյուղի բնակիչների համար:
Ծրագրով նախատեսվում է Առատաշեն գյուղի Մաշտոց, Երիտասարդական, Նժդեհ փողոցների 2050 գծմ ջրահեռացման համակարգի կառուցում, որի արդյունքում կունենանք անձրևաջրերի հավաքագրման և ջրահեռացման համակարգ:
Ծրագրով նախատեսվում է Գրիբոյեդով գյուղի Սունդուկյան, Մաշտոց, Դաշտենց փողոցների 1450 գծմ ջրահեռացում:
Ծրագրով նախատեսվում է Ջրառատ գյուղի Ուղեկալների փողոցի 200 գծմ ջրահեռացում:
Ծրագրով նախատեսվում է Ջրարբի գյուղի Պ.Սևակ, Չարենցի, Աղայան փողոցների 610 գծմ ջրահեռացում:
Ծրագրով նախատեսվում է Լուսագյուղ գյուղի Խանջյան, Սայաթ-Նովա և Ն. Դարբինյան 1 փակուղի փողոցների 900 գծմ ջրահեռացում:
Ծրագրով նախատեսվում է Ակնաշեն գյուղի 420 գծմ. ջրահեռացում:
Ծրագրով նախատեսվում է Մեծամոր գյուղի Սարյան փողոցի 600 գծմ ջրահեռացում:
Ծրագրով նախատեսվում է Հայկաշեն 4-րդ, 11-րդ, 2-րդ փեղոցների ջրահեռացում 1400 գծմ և ջրամատակարարում 1400 գծմ:

2. **Գազաֆիկացման համակարգի կառուցման և պահպանման համար նախատեսվել է համապատասխանաբար՝** 300000,0, 237000,0 **և** 255000,0 **հազար դրամ/**

Ծրագրով նախատեսվում է Արաքս գյուղի Դեմիրճյան-51 1720գծ մ. փողոցի և Դրոյի փողոց՝ դեպի մշակույթի տուն, մանկապարտեզ, դպրոց տանող փողոցի գազաֆիկացում:

Ծրագրով նախատեսվում է Մեծամոր գյուղի Ա. Խաչատրյան, Յ.Շիրազի, Պ.Սևակի և Ե.Չարենցի փողոցների գազաֆիկացում, ինչը կկրճատի բնակիչների ֆինանսական խնդիրները և կբարելավվի տնտեսության մակարդակը:
Ծրագրի իրականացման արդյունքում Արաքս գյուղը կունենա փողոցների գազաֆիկացում, ինչի արդյունքում 90 տնտեսություն կապահովվի գազամատակարումով՝ ապահովելով բնակիչների կենսամակարդակի բարձրացում:
Ծրագրի իրականացման արդյունքում Մեծամոր գյուղը կունենա գազաֆիկացված փողոցներ՝ Ա.Խաչատրյան փողոց 350մ., Յ.Շիրազ փողոց-360մ., Պ.Սևակ փողոց-450մ., Ե.Չարենց-450մ., ինչի շնորհիվ տնտեսության մեծ մասը կունենա գազամատակարարում և կբարձրանա բնակչության կենսամակարդակը:

Ծրագրով նախատեսված է նաև Արտիմետ գյուղի փողոցների 330գծմ, Խորոնք գյուղի Սևահողերի թաղամասի, Գայի , Վ.Տերյանի, Իսահակյանի 2-րդ փակուղու 3540գծմ, Առատաշեն գյուղի Դեմիրճյան, Չարենց, Մ.Մկրտչյան և Բաղրամյան փողոցների 1500գծմ, Գրիբոյեդով գյուղի Պ.Սևակ փողոցի 600գծմ, Ապագա գյուղի 19-րդ և 20-րդ փողոցների 650գծմ, Ջրառատ գյուղի Արարատյան, Մկրտչյան փողոցների 200գծմ, Ջրարբի գյուղի Գ.Նժդեհ, Մեծարենց,Իսահակյան, Ա.Խաչատրյան փողոցների 900գծմ, Յայկաշեն գյուղի 2-րդ, 5-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ գյուղերի 1500գծմ, Ակնաշեն գյուղի Օզմանյան փողոցից Թումանյանի փողոց՝ 500գծմ, Գայ գյուղի Սարյան 5, Սարյան 6, 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 12-րդ փողոցների՝ 3800գծմ գազաֆիկացման աշխատանքների ձեռք բերման համար :

4. **Ոռոգման ցանցի կառուցման աշխատանքների համար նախատեսվել է համապատասխանաբար՝** 272000.0, 60000,0 **և** 158000,0 **հազար դրամ**:
Ծրագրով նախատեսվում է Խորոնք գյուղում ոռոգման համակարգի կառուցում, Արտիմետ գյուղում ոռոգման համակարգի կառուցում և Ակնաշեն գյուղի ոռոգման համակարգի կառուցում:
Ծրագրով նախատեսվում է կառուցել Խորոնք գյուղի 500գծմ. ոռոգման համակարգ: Ոռոգման համակարգի շնորհիվ բոլոր տնտեսությունները ոռոգման ջուրը կկարողանան ստանալ ժամանակին և անխափան:
Արտիմետ գյուղի 1500գծմ. ոռոգման համակարգը: Տարիներ շարունակ հողատարածքները չեն մշակվել ջրի բացակայության պատճառով և LR-ների տեղակայումը կապահովի ջրի հասանելիություն այն հողերին, որտեղ կար ջրի բացակայություն:
Ծրագրով նախատեսվում է Ակնաշեն գյուղի 1200գծմ. ոռոգման համակարգի կառուցում,որը թույլ կտա ոռոգել անմշակ հողերը, որոնք չէին մշակվում ջրի բացակայության պատճառով;
Ծրագրի իրականացման արդյունքում Խորոնք գյուղը կունենա ոռոգման համակարգ, որի շնորհիվ կունենանք ջրի խնայողություն և ջրի կորուստները կհասնեն նվազագույնի: Կտեղակայվեն LR համակարգեր, որոնք հնարավորություն կտան ոռոգել անմշակ հողերը ժամանակին և անխափան:
Ծրագրի իրականացման արդյունքում Արտիմետ գյուղը կունենա ոռոգման համակարգ, որը կապահովի անմշակ հողերի ոռոգումը, ինչը ի հայտ էր եկել ջրի բացակայության պատճառով:
Ծրագրով ոռոգման համակարգից կօգտվի բնակչության 10% և գյուղում գյուղատնտեսական հողերից ոռոգվող հողատարածքների 10 տոկոսը: Նվազագույնի կհասցվի ջրի կորուստը: Գյուղում կտեղակայվի LR համակարգ, որպեսզի բոլոր տնտեսությունները ոռոգման ջուրը կարողանան ստանալ ժամանակին և անխափան:
Ծրագրի իրականացման արդյունքում Ակնաշեն գյուղը կունենա ոռոգման համակարգ: Կտեղակայվի LR համակարգ, որը կապահովի անմշակ հողերի ոռոգումը, ինչը հնարավոր չէր ջրի բացակայության պատճառով;

5. **Լուսավորության համակարգի վերակառուցման և պահպանման աշխատանքների ձեռք բերման համար նախատեսվել է համապատասխանաբար՝** 60000.0, 60000,0 **և** 65000,0 **հազար դրամ/**

Ծրագրով նախատեսվում է իրականացնել Արաքս համայնքի բնակավայրերում սեփականության իրավունքով համայնքին պատկանող տարածքներում լուսավորության նոր համակարգի կառուցում, մասնավորապես Արաքս գյուղի լուսավորության նոր համակարգի կառուցում, Գայ գյուղի լուսավորության նոր համակարգի կառուցում:
Ծրագրով նախատեսվում է Արաքս գյուղի Պ. Սևակ, Ֆրունզիկ Մկրտչյան, Դեմիրճյան, Արցախ, Սահմանապահների փողոցների լուսավորության նոր համակարգի կառուցում՝ 4020 գծմ.: Ինչը կնպաստի բնակչության անվտանգ երթևեկությունը, կբարելավվի համայնքի արտաքին տեսքը:
Ծրագրով նախատեսվում է Գայ գյուղի լուսավորության համակարգի կառուցում՝ 11800 գծմ: Գյուղի **Սարյան, Սարյան 1, Արարատյան, Արարատյան 1 փակուղիներ, Շահումյան, Սարյան 6, Սարյան 3, Սարյան 4, Սարյան 7, Երևանյան Խաչատրյան, Իսահակյան** փողոցներում բացակայում է ներքին լուսավորության համակարգ, ինչը դժվարացնում է բնակիչների անվտանգ տեղաշարժը: Նշված փողոցները հանդիսանում են երկրորդային: Լուսավորված փողոցները կապահովեն անվտանգություն, հարմարավետություն: Ծրագրի իրականացման արդյունքում Արաքս գյուղը կունենա լուսավորության նոր համակարգ: Կապահովվի բնակիչների և մեքենաների անվտանգ տեղաշարժը: Բնակավայրերը կունենան 100% արտաքին լուսավորություն: Ինչը կնպաստի բնակչության անվտանգ երթևեկությունը, կբարելավվի համայնքի արտաքին տեսքը:
Ծրագրի իրականացման արդյունքում Գայ գյուղը նույնպես կունենա լուսավորության նոր համակարգ: Գյուղի որոշակի փողոցներ լուսավորված են: Գյուղում հիմնական շարժը սկսվում է երեկոյան ժամերին,բնակիչները հիմնականում իրենց բերքը շուկա են տանում այդ ժամանակահատվածում: Լուսավորված փողոցները կապահովեն նաև ուսանողների անվտանգ տեղաշարժը:

6. **Ճանապարհների վերակառուցման եվ պահպանման համար ՝համապատասխանաբար հատկացվել է** 414000.0, 455000.0 **և** 477000. 0 **հազար դրամ**:
Ծրագրով նախատեսվում է իրականացնել Արաքս համայնքի բնակավայրերում սեփականության իրավունքով համայնքին պատկանող տարածքներում ճանապարհների ասֆալտապատում, մասնավորապես Արաքս գյուղի Գ. Նժդեհ փողոցի ասֆալտապատում և Գայ գյուղի Գարնանային, Գարնանային 2, Գարնանային 3, Սարյան 3, Սարյան 4, 20-րդ և Երևանյան 6 փողոցների ասֆլատապատում:
Ծրագրով նախատեսվում է Արաքս գյուղի Գ.Նժդեհ փողոցի ասֆալտապատում՝ 550 գծմ.: Ինչը կնպաստի բնակչության անվտանգ երթևեկությունը:
Ծրագրով նախատեսվում է Գայ գյուղի փողոցների ասֆալտապատում՝ 2880 գծմ՝ կառուցված միջազգային նորմերին համապատասխան կահավորմամբ և սպասարկմամբ: Փողոցի ասֆալտապատումը կբարելավի նաև անխափան երթևեկությունը դեպի կենտրոնական փողոցներ: Ծրագրի իրականացման արդյունքում Արաքս գյուղը կունենա հիմնանորոգված ճանապարհ, կապահովի մեքենաների անխափան երթևեկությունը, ճանապարհի հիմնանորգումը կբերի համայնքի տնտեսական զարգացմանն ու հզորացմանը: Կապահովվի բնակիչների և մեքենաների անվտանգ տեղաշարժը ինչպես նաև կնպաստի բնակչության անվտանգ երթևեկությունը, կբարելավվի համայնքի արտաքին տեսքը:
Ծրագրի իրականացման արդյունքում Գայ գյուղում նույնպես նախատեսվում է իրականացնել ասֆալտապատման աշխատանքներ՝ կառուցված միջազգային նորմերին համապատասխան կահավորմամբ և սպասարկմամբ: Նշված փողոցը երկրորդական ճանապարհ է, որը միանում

է կենտրոնական ճանապարհին և տանում է դեպի շուկա: Ասֆալտապատման արդյունքում գյուղի բնակչությունը հեշտությամբ և անխափան կարող է տեղափոխել իր բերքը շուկա, քանի որ բերքառատ շրջանում գլխավոր փողոցում շատ են լինում խցանումներ, իսկ նշված երկրորդական ճանապարհներով երթևեկելը այդքան էլ բարենպաստ չէ բնակիչների համար:

7. **Ֆոտովոլտային կայանների կառուցման համար նախատեսվել է ՝ համապատասխանաբար**՝ 105000,0, 150000,0 **և** 150000,0 **հազար դրամ**/ ,

Ծրագրով նախատեսվում է իրականացնել Արաքս համայնքի բնակավայրերում սեփականության իրավունքով համայնքին պատկանող տարածքներում արևային ֆոտովոլտային կայանների տեղադրում, մասնավորապես Արաքս գյուղում արևային ֆոտովոլտային կայանների տեղադրում և Գայ գյուղում արևային ֆոտովոլտային կայանների տեղադրում:

Իրականացվող աշխատանքների ծավալներն են՝

Արաքս գյուղում 99 կՎտ հզորության արևային ֆոտովոլտային կայանի տեղադրում:

29.5 կՎտ պիկային հզորությամբ՝ գ. Գայ՝ Խաչատրյան փողոց, Գայ գյուղի Արվեստի դպրոցի արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի, 106.79 կՎտ պիկային հզորությամբ գյուղ Գայ՝ Սարյան փողոց, թիվ 3 հասցեում մշակույթի տան արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի, 71.39 կՎտ պիկային հզորությամբ գյուղ Գայ՝ Իսահակյան 1 փողոց, մանկապարտեզի արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի, 42.48 կՎտ պիկային հզորությամբ գ. Գայ՝ Խաչատրյան փողոց, թիվ 1 համայնքապետարանի արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի տեղադրում;

## ԳԼՈՒԽ 4.

## ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2026-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԴԵՖԻՑԻՏԸ

1. 2026-2028 թվականների կանխատեսվող դեֆիցիտի կամ հավելուրդի ֆինանսավորման աղբյուրների կազմում արտացոլված են տարեսկզբի ազատ մնացորդի վարչական մասից ֆոնդային մաս անցնող և հենց ֆոնդային մասում կանխատեսվող բյուջետային միջոցները, որի ընդհանուր պատկերով 2026-2028 թվականների կանխատեսվող դեֆիցիտը կազմում է 832000,0 , 884140,0 և 976000,0 հազար դրամ:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
## ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, 060 88 77 77 araks.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 ՀՈՒՆԻՍԻ 2025թվականի N 53-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 21-Ի N 157-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասով, 33-րդ և 34-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

## ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 157-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲԱՍՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԲԱՐՅԱՆ ՄԵԼԱՆՅԱ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՂԱԶԱՐՅԱՆ ՂԱԶԱՐ

ՄԱԿԱՐՅԱՆ ՄԱՐՅԱՄ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԱՐԵԿ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՇԱՀԻՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

*Որոշման նախագիծը նախապատրաստեց*
ԱՐՓԻՆԵ ԱՄԻՐՋԱՆՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու
2025 թվականի հունիսի 25–ի N 53-Ն որոշման

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 21-Ի N 157-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ**

1. ԵԿԱՄՏԱՅԻՆ ՄԱՍ

1. **Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով հատկացումները ավելացնել 249520,0հազար դրամ**
2. **Հողի օտարումից մուտքերը ավելացնել 32400,0 հազար դրամ**

2.ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍ

**1. 11.1.2-ի (Պահուստային ֆոնդ)-ի**

1) 4891 հոդվածից նվազեցնել 21000,0 հազար դրամ
2) 4891 հոդվածից 242600,0 հազ. դրամ կատարել հատկացում ֆոնդային բյուջե.

**2.01.1.1-ի (Արաքսի համայնքապետարան)**

1) 4232 հոդվածին ավելացնել 1000,0 հազար դրամ

**3. 4.5.1-ի ( Ճանապարհային տնտեսություն)**

1) 5112 հոդվածին ավելացնել 275000,0 հազար դրամ

1) 5112 հոդվածին ավելացնել սուբվենցիա 249520,0 հազար դրամ

4. 6.4.1 **ի ( Արտաքին լուսավորություն)**

1) 4239 հոդվածին ավելացնել 20000,0 հազար դրամ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, 060 88 77 77 araks.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

25 ՀՈՒՆԻՍԻ 2025թվականի N 54-Ա

## ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ «ԳԱՅԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-ԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածով՝ օրենքի անալոգիայով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի ապրիլի 21-ի N595-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 3-րդ կետի 6-րդ ենթակետն ու համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Արաքս համայնքի Գայ գյուղի նախադպրոցական կրթության գործունեության իրականացման համար Արաքս համայնքի «Գայի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ին անհատույց շահագործման նպատակով տրամադրելու մասին.

## ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի սեփականություն հանդիսացող՝ Գայ գյուղ, Ա. Իսահակյան 1-ին փողոց 16/1 հասցեում գտնվող, 1307.5քմ մակերեսով մանկապարտեզի շենքը, 29.8քմ մակերեսով պարիսպը և դրանց զբաղեցրած, օգտագործման ու սպասարկման համար անհրաժեշտ՝ 04-033-0077-0062 կադաստրային ծածկագրով 0.41505 հա հողամասը (այսուհետ՝ անշարժ գույք) անհատույց օգտագործման իրավունքով, անժամկետ տրամադրել Արաքս համայնքի «Գայի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ին՝ նախադպրոցական կրթություն իրականացնելու նպատակով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՍՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԲԱՐՅԱՆ ՄԵԼԱՆՅԱ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՂԱԶԱՐՅԱՆ ՂԱԶԱՐ

ՄԱԿԱՐՅԱՆ ՄԱՐՅԱՄ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԱՐԵԿ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՇԱՀԻՆՅԱՆ ՇԱՀԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

*Որոշման նախագիծը նախապատրաստեց*
ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, 060 88 77 77 araks.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 ՀՈՒՆԻՍԻ 2025թվականի N 55-Ա

## ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ «ՄԵԾԱՄՈՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-ԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

